ARABKIR
JOINT MEDICAL CENTRE
Արաբկիր
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF CHILD AND ADOLESCENT HEALTH
Mamikoniants str. 30, Yerevan, 375014, Armenia
Tel.: (374 1) 236 883, Fax: (374 1) 284 170, E-mail: aramc@arminco.com

Տեղեկանք

Գրիգոր [redacted], ծնված [redacted]16թ., 2023թ.-ից հսկվում է "Արաբկիր" ԲՀ-ի ռևմատոլոգիական դիսպանսերում Յուվենիլ դերմատոմիոզիտ ախտորոշմամբ:
2023թ-ի մարտին ունեցել է էրիթեմատոզ ցան դեմքին, ապա հոդերի տարածիչ մակերեսներին: Ստացել է հակահիստամինային բուժում, սակայն փոփոխություն չի դիտվել: Ապա ավելացել է ընդհանուր թուլությունը, շուտ հոգնածության զգացումը, աստիճանաբար ավելացել է մկանային թուլությունը և ձայնի փոփոխությունը:
Հետազոտվել է ՌԴ-ում, (14,04-26,05,2023թ) ախտորոշվել է Յուվենիլ դերմատոմիոզիտ, լաբորատոր տվյալներից CK 5025U/l, LDH 839U/l, AST 235, ALT 86.9 , իլեոսակրալ հոդերի ՄՌՏ՝ երկկողմանի սակրոիլեիտ, դերմատոմիոզիտի պատկեր: Ստացել է Պրեդնիզոլոն 25մգ/օրը, որը ստացել է 2,5 ամիս, դոզայի աստիճանական նվազեցմամբ, ապա դադարեցվել է, սակայն գանգատների վերսկսման պատճառով վերսկսվել է 5մգ Պրեդնիզոլոնի ընդունումը: Ստացել է նաև Մետոտրեքսատ 10մգ/շաբաթը 1 անգամ, ե/մ (տես էպիկրիզ): Բուժման ֆոնին գանգատները քիչ նվազել են, ի հաշիվ ձայնի կարգավորման և մկանային ուժի քիչ ավելացման, սակայն մկանային թուլությունը նորից վերսկսվել է: 04,08-26,08,2023թ-ին հետազոտվել է "Արաբկիր" ԲՀ-ի ռևմատոլոգիական բ/ք-ում Յուվենիլ դերմատոմիոզիտ ախտորոշմամբ: 09,08,2023թ-ին Մպրեդի դոզան բարձրացվել է 16մգ/օրը, որը աստիճանաբար նվազեցվել է, այժմ ստանում է 2մգ/օրը: Ստացել է Օկտագամի 6 ներարկում (12,09,2023թ, 16,10,23թ, 23,12,2023թ, 16,03,2024թ, 16,04,2024թ, 23,05,2024թ), ստացել է նաև Մետոտրեքսատ 12,5մգ/շաբաթը 1 անգամ, ե/մ և ֆոլաթթու 5մգ/շաբաթը 1 անգամ, Պլակվինիլ 125մգ/օրը (վերջինս ստանում է մինչ այժմ): Ստացել է վերակագնողական բուժում: 2023թ-ի հոկտեմբերի վերջում գանգատվել է աջ ծնկան հոդի արտահայտված ցավից, կատարվել է ռենտգենգրաֆիա, դենսիտոմետրիա, ախտորոշվել է օստեոպորոզ, նշանակվել է Վիտամին Դ 4000ՄՄ/օրը և CaD3 1000մգ: Բուժման ֆոնին ունեցել է զգալի դրական դինամիկա, երեխան կարողացել է քայլել փոքր տարածության վրա: Սակայն 2024թ-ի հունվարից գանգատները աստիճանաբար ավելացել են:2024թ մայիսին վերաստուգվել է դենսիտոմետրիան, առկա էր բացասական դինամիկա, էնդոկրինոլոգի կողմից շտկվել է բուժումը՝ վիտամին Դ 4000ՄՄ/օրը, CaD3 1500մգ/օրը: 20,06,2024թ Զախ ս/թ հոդում կատարվել է 40մգ Կենալոգի ն/հ ներարկում, աջում ՝ 30մգ: Հունիսի սկզբից սկսել է գանգատվել մեջքի գոտկային հատվածի ցավից, կատարվել է ողնաշարի ռենտգենգրաֆիա՝ Th4, Th6, Th11, L1 ողերի մարմինների դեֆորմացիաներ՝տարբեր աստիճանի արտահայտվածությամբ - կոմպրեսիոն կոտրվածքներ: 2024թ-ի հուլիսին ունեցել է խոցային էլեմենտներ վերին վերջույթներին, որոնք աստիճանաբար ավելի են արտահայտվել:30,07,2024թ կատարվել է 24գ Օկտագամի և 1 ներարկում: Սեպտեմբերին բուժմանը

ավելացվել է Սելսեպտ 1250մգ/օրը, որը դադարեցվել է անարդյունավետության պատճառով: 2024թ-ի դեկտեմբերին և 2025թ-ին հունվարին 4 անգամ ստացել է Ռիտուքսիմաբի ներարկումներ, սակայն անարդյունավետ:
25,03,2025թ-ից ստանում է Քսելյանս 5մգ/օրը, որի ֆոնին առկա է նկատելի դրական դինամիկա ի հաշիվ մկանային ուժի քիչ ավելացման և ինքնազգացողության ավելացման:
Ներկայիս վիճակը՝
Չի կանգնում, չի քայլում, պառկած դիրքում գլուխը բարձրացնում է 8- 10վրկ, , ստորին վերջույթները չի կարողանում բարձրացնել. Վերին վերջույթները մինչև 30 վրկ պահում է:Կարողանում է պառկած դիրքում թեքվել աջ և ձախ ավելի ակտիվ, պտտվումէ փորի վրա ապա մեջքի : Պառկած դիրքում ոտքերը պահում է ծնկան հոդերում հարկադրական ծալման դիրքում:
Կ/ա շարժումները ցավոտ են, խիստ սահմանափակ: Ծնկան հոդերի տարածումը խիստ սահմանափակ, ցավոտ, ծալումը ցավոտ: Սրունք-թաթային հոդերի շարժումները ցավոտ, սահմանափակ: Արմնկային հոդերի շարժումները սահմանափակ է: Աջ դաստակի 3ֆալանգի դեֆիգուրացիա:
Մաշկը չորությունը նվազել է, վերին կոպերի այտուցը նվազել է , դեմքին և պարանոցին էրիթեմատոզ ցան, շագանակագույն պիգմենտացիա քիչ ավելացել են: Արմկային և ծնկան հոդերի տարածիչ մակերեսներին էրիթեմատոզ ցան, որը քիչ ավելացել է: Աջ բազկին և նախաբազկին սպիական էլեմենտներ: Դաստակների մանր հոդերի տարածիչ մակերեսներին խոցային մակերեսների հետքեր: Գլխի մազածածկույթը խտացել է
Ձայնը թեթև ռնգային երանգով

Խնդրում եմ տրամադրել ֆինանսական օգնություն դեղորայքը ձեռք բերելու համար:
Կանխավ շնորհակալություն:

Ռևմատոլոգիական ծառայության ղեկավար՝ Գ. Ռ. Խլոյան
29.09.2025թ